ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆՑ ՍՐԱՀՈՒՄ

Հոգևոր եղբայրներ, հարգարժան հայրենակիցներ, սիրելի հանդիսականներ.

Խրիմյան Հայրիկի անձի վերակենդանացնող այսօրվա մեջ ես կուզեի իմ փակման խոսքն ասել՝ նախ հայտնելով իմ շնորհակալությունները այն անձերին, ովքեր մասնակից դարձան և այս գեղարվեստական, դասախոսական ելույթը մեզ հրամցրին:

Ի՞նչ է նշանակում որևէ մեկ անձի հիշատակ ոգեկոչել: Ինչո՞ւ ենք անում, ի՞նչ է բերում մեզ՝ ինքնամխիթարությո՞ւն, որ մի մեծ անձ ենք ունեցել, դաս ենք տալիս, ի՞նչ է նպատակները, բևեռակետը, որի վրա կենտրոնացնենք մեր ուժը: Դա մեր կյանքն է այսօրվա: Նրանք մեր խոսքի պետքը չունեն, Աստված նրանց վարձատրել է: Մեր գովերգելը նրանց որևէ բան ոչ կավելացնի, ոչ էլ կպակասեցնի: Ոգեկոչում, մի անձի վերակենդանացում կնշանակի մեր անձերի ինքնատեսություն, ինքնաքննություն, ինքնաճանաչում և այդ տեսակետից ես պետք է ասեմ, որ մենք պետք է, որ առարկայորեն մոտենանք մեր պատմությանը և ոչ թե այսպես գովերգական, ներբողական պատկերացումով: Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա, ասում ենք, բայց ո՞վ է Նարեկացի և կամ Քուչակ կարդում:

Խրիմյան Հայրիկ: Նա պետք է գնար Բեռլին և Պոլսում նրան հարց տվեցին /նա որևէ օտար լեզու չէր իմանում/, թե ի՞նչ լեզվով պետք է խոսի, և նա պատասխանում է, որ պետք է մի այնպիսի լեզվով խոսի, որ ամբողջ աշխարհն է հասկանում- պիտի լամ: Եվ հետո, ասում է պատմագիրը, Խրիմյանը պետք է հասկանար, որ արցունքին տրամաբանությունը որքան անհասկանալի էր այդ ապառաժե սրտերին դիմաց: Սակայն նա չփոխվեց, քանզի նա ուրիշ մարդ էր, նա դիվանագիտության մարդ չէր: Նա ճառագայթում էր, սրտի բաբախում, ժողովրդի սիրո արտաբերում, կյանքի հողի միջից հայի կյանքը դուրս բերելու նախանձախնդրության առաքյալն էր: Նրա դրքերը կարդացողը միայն կհասկանա: Խրիմյանը իր մահից երկու ամիսներ առաջ, դեկտեմբերի 12-ին, նամակ գրեց Անգլիո Թագավորին, որում ասում է. «Պիտի լսես, արքա, ձայնը մարտիրոս ժողովրդի ծերունի Հայրապետի, որի մեկ ոտքը գերեզմանում է արդեն, որ անմահության սեմից է խոսում քեզի, իբրև աշխարհիկ իշխաններուդ ամենեն արդարասերին: Ծերունի Հայրապետը չունի ոչ զենք, ոչ զրահ, ոչ դիվանագիտության փառք, որով մարդիկ իրար են համոզում, ոչ գիտության հմտություն. նրա մեկ ձեռքում խաչ կա, իսկ մյուսում՝ քար, ահա ամբողջ իր ունեցվածքը. պիտի ուզե՞ս լսել այդպիսի մարդու խնդրանքը»:

Այդ շրջանին Օրմանյանի պես մեկը պետք էր, որ այդ մարդկանց հետ և՛ իտալերեն, և՛ ֆրանսերեն, և՛ լատիներեն, և՛ այլ լեզուներով կարողանար խոսել:

Խրիմյանը ուրիշ մարդ էր, մեր ժողովրդի սերեն և որքան գեղեցիկ և թելադրական է, երբ կկարդաս «Պապիկ և թոռնիկ»-ը, խոսում է հոգին, և ստիկա մեծագույն քաղաքականությունն է, բոլոր դիվանա-

գիտություններեն վեր: Եթե հողիդ կառչած չես, ապա դրա տերը չես: Այդ դասն է տվել մեզ Հայրիկը: Հողը տեսակ մը հարստություն է, Աստծու տված է քեզ ազատ ու անկախ մեր Հայրենիքի մեջ: Մենք հողին արժեքը տակավին չենք հասկացել, ճղճիմ հարցերով մեկս մյուսի կյանքն է թունավորում: Պատմությունը մեզ չի արդարացնի, եթե մենք չկարողանանք այս ժամանակներին, այս նոր պայմանների մեջ, գիտնանք մեր արժեքը: Այս է մեծագույն դասը Խրիմյանի: Երանի մեր հեռուստատեսությունը, երանի մեր լրատվական կենտրոնները դասը տան Խրիմյանի մեր ժողովրդին: Փոխարենը ի՞նչ դասեր են տալիս. բազմաթիվ ոչ պետքական դասեր. մեղք, հազար մեղք: Հայության հոգին քանդում են: Խրիմյան Հայրիկներ են գալու որպես դեղ և դարման: Այս է դասը, որ պետք է սովորել, պետք է տարածել մեր նոր սերնդի հոգիներում:

Մեկ օր Խրիմյանը ժողովրդական հովվապետական այցելություններ կազմակերպեց, և իր կենսագիրը ասում է, որ նա այցելեց ամեն տեղ. Օշական, Աշտարակ, Մուղնի Հովհաննու վանք, Սաղմոսավանք, Սյունյաց աշխարհ..., վերջին Կաթողիկոսը, որ այցելել է Սյունյաց աշխարհ 1903-ին, իր մահից չորս տարի առաջ, Խրիմյան Հայրիկն է, և 1903-ից մինչև 1989-ը ոչ մի Կաթողիկոս ոտք չի դրել այնտեղ: Երբ որ ես Կիլիկիո Կաթողիկոս էի և եկա այստեղ, փափագ հայտնեցի Տաթևի վանքը տեսնել, և երջանկահիշատակ Վազգեն Վեհափառը ասաց. «Դու այդ փափագով ինձ մի մեծ խղճի խայթ տվեցիր: 33 տարի է, որ ես այստեղ Կաթողիկոս եմ, առիթ չեմ ունեցել»: Որոշեցինք միասին գնալ և միասին գնացինք: Եվ ի՞նչ գեղեցիկ էր 1903 թվականից մինչև 1989 թվականը առաջին անգամ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ոտքն էր դիպչում այդ օրհնյալ հողին:

Եվ այն ատեն էր, երբ Խրիմյանը այցելել է Սևանա վանք Գեղամա ծովում, այդ հինավուրց մենաստանը, ուր շարունակվում էին ճգնավորական կենդանի սովորությունները. «Ինչպե՞ս եք անցկացնում ձեր օրերը»,- հարցնում է միաբաններին, ովքեր եկել էին իր մոտ: «Աղոթելով օրն ի բուն»,- պատասխանում են: Իսկ Վեհափառը նրանց անմիտներ է անվանում, ասելով, որ ճիշտ չէ օրն ի բուն աղոթել, այլ պետք է երբեմն կարդալ, հող մշակել: Ասում է, որ նույնիսկ հին ճգնավորները օրն ի բուն չեն աղոթել: Որքա՞ն դիպուկ է ասում, որն ինձ մի գեղեցիկ խոսք է հիշեցնում: Աշխատանքը, ասում է մի մեծ իմաստուն, թանձրացյալ աղոթք է: Եվ իմ մեծ հայրը և մայրը, որ հողի միջից էին մեր կյանքը հանում, ձեռքերը հողի մեջ էին խառնում և այդ աշխատանքը սրբություն էր: Հալալ վաստակով կյանքը շահելը պատիվ է և նաև անկախության ուժը: Անկախությունը պետք է լինի մեր անձին և մեր կյանքին մեր հողի միջից: Մեր աշխատունակության շնորհիվ, մեր հանճարով, մեր կյանքը բարձրացնելու ընթացքը: Ահա թե ինչպես ես այսօր ուզում եմ, որ Հայրիկի դասը սովորենք, և դուք, սիրելի վասպուրականցիներ և սիրելի հայրենակիցներ, գնացեք և պատմեք ձեր հայրենակիցներին, որ Խրիմյան Հայրիկը երեկ և այսօր մեզ համար միշտ նույնը կմնա: Հայրիկ, սակայն մի՞թե մենք պատրաստ ենք որդի լինենք: Հայրիկը հայրիկ է, բայց մենք որքա՞ն որդի ենք, այս է հարցը, որով պատգամում եմ. եղե՛ք որդիներ, եղե՛ք թոռներ և ծոռներ Խրիմյան Հայրիկի: